**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ**

---

## ԲՈՒԺԱՇԽԱՏՈՂԻ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

---

Սիրելի բուժաշխատողներ, առողջապահության ոլորտի հարգելի ներկայացուցիչներ, շնորհավորում եմ բոլորիդ՝ մասնագիտական տոնի կապակցությամբ:

Ձեր սրտացավ և անձնուրաց աշխատանքի շնորհիվ միլիոնավոր մարդիկ ամբողջ աշխարհում շարունակում են ապրել և արարել: Դուք եք, որ համաճարակների և արտակարգ իրավիճակների ժամանակ դառնում եք առաջամարտիկներ, վտանգում եք հաճախ ձեր սեփական առողջությունը հանուն ընդհանուրի բարօրության:

Պատերազմների ժամանակ ձեր ճերմակ համազգեստը հայտնվում է սահմանների վրա, խաղաղության ժամանակ ձեր ափերի մեջ մանուկներ են լույս աշխարհ գալիս:

Սիրելի բուժաշխատողներ, ձեզանից յուրաքանչյուրը, ով պատվով է կատարում իր առաքելությունը, արժանի է անմնացորդ հարգանքի ու խոնարհման:

Շնորհակալություն եմ հայտնում ձեզ՝ ձեր ամենօրյա նվիրման և սրտացավ աշխատանքի համար:

Թող կյանքի ու մահվան ձեր բոլոր մենամարտերը պսակվեն հաղթանակով:

Հարգանքներով՝ Սուրեն Կոստանդյան